

Ճշմարտութեանց դէմ դառնայ՝ մարդկային ընկերութենէ, դուրս հանել կը վայելէր զայնպիսին :

(Ժ) Ե որ կ'ուզէք որ դուք ալ ծերութե ատեննիւ պատկառելի ըլլաք ուրիշներուն, ծերոց վրայ սէր ու մեծարանք ցուցըցէք : Ներունի մը տեսնաք որ ընտանի կերպով պատանեաց հետ կը վարուի և անոնց քաջալերութիւն կուտայ, իմացէք որ ինքն ալ իր տղայութե ատենը ծերոց պէտք եղած պատիւը տուեր է : Շատ անգամ պատանիք մեծերուն փորձառութեան տուած դասերը ծաղր կ'ընեն, սակայն քանի որ տարիքնին առնուն՝ այնչափ աւելի աղէկ կ'իմանան առնոց ճշմարտութիւնը . երանի անոնց՝ որ քիչ բան սորված են իրենց սխալմունքներովը :

7

#### Պէշ ընկերաց շահները :

Միշտ բանէ աւելի գէշ ընկերներէն վախցէք, սիրելիք : Նշագամ մարդիկ ամէն ջանք կ'ընեն ուրիշներուն ալ գէշութիւն սորվեցընելու, որպէս զի իրենց չարութիւնները այնչափ աչքի չեւենան . այս իրենց չար դիտաւորութեանը հասնելու համար փորձ չմնար որ ուղղակի և կամ անուղղակի կերպերով չփորձեն : Մի հնարքներուն մէջ ամենէն աւելի հասարակը, և դժբաղդաբար՝ ամենէն աւելի անփորձ պատանիքը խաբողը այն է որ կը ջանան անոնց մտքին մէջ խոթել թէ պարկեշտութիւն ըսածդ նախապաշարմունք մըն է, հնազանդութիւնը՝ տկարութիւն, իսկ առաքինութիւնը առասպել մը : Այս որպէս զի իրենց նպատակին դիւրաւ հասնին, միայն չար խրատներով գոհ չեն ըլլար՝ այլ օրինակով ալ այն բաները կը քարոզեն . մտիկ չընելու ալ ըլլաք՝ զձեզ ծաղր կ'ընեն : Օգոյշ կեցէք, կ'աղաչեմ, այսպիսի ապականութեան խրատիչներէն . լաւ դիտեցէք որ աւելի աղէկ է մէկ առաքինի մարդէ մը պզտիկ փոքր մը ըլլել, քան թէ այն չար մարդոց արհամարհանքն ու ծաղրը :

Ա. ԹԻԻՍ

#### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՕԳՏԱԿԱՐ ԳԻՏՈՒԹԻՒՆՔ

Բ.

#### Եղբայրացիներ :

Ա.

ԵԶՈՒԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ որ ընդհանրապէս կէս իմաստնոց քան թէ իմաստնոց մէջ պատուած է, մեր ազգին մէջ մեծ պատիւ դտեր է հնուցմէ՝ ի վեր, իրեն լեզուներ սովորելու յարմարութե և քաղաքական վիճակին հանգամանայն համար : Մեր համար կը վայելէ որ քիչ մը քննենք, թէ ըստ ինքեան լեզուադիտութիւնը պատուական բան է, ինչ բանի համար պէտք է սովորիլ և ո՞րչափ, ո՞ր լեզուները պէտք է սովորիլ, և ո՞րչափ հարկաւոր է ազգային լեզուն գիտնալը :

Եզուադիտութեան վրայ խօսողներուն շատը՝ բնաբանի պէս կը գնեն և Վարդուս մեծ կայսեր ըսածը, թէ «Մէկը որչափ լեզու գիտէ, այնչափ անգամ մարդ է» . և այս խօսքով մէկէն կարգացողին աչքն ու բերանը գոցել կ'ուզեն : (Ժ) Ե որ զրուցողին մեծութիւնը ամէն խօսքն ալ մեծ ընէր, մենք ալ կրնայինք անոր հակառակ բնաբան մը դնել Վարդուսէն մեծ ինքնակալի մը խօսքը, Վափուէոնին, որ երբ դիմացը բերին նոր հանգուցեալ ծիրանաւորը՝ Սեծոֆանդէ՝ երիտասարդութե փամանակը, և ըսին թէ այսչափ լեզու գիտէ, պատասխանեց, թէ Սերմն այնչափ անգամ տղայ է : Վարելի է Վարդուս կ'ուզէր իմացընել, թէ մէկը որչափ օտար լեզու գիտէ՝ այնչափ օտարադէպաց հետ կրնայ խօսիլ և իբր թէ առնոց ազգակից ըլլալ, իսկ Վափուէոն թէ որչափ մէկը լեզուներու ետեւէ կ'ըլլայ՝ այնչափ միտքը կը զբաղեցընէ գիտցած բանը նորէն գիտնալու ուրիշ ձայնով մը, և աւելի խօսող քան մտածող կ'ըլլայ :



Յիրաւի պէտք է ճանչնալ՝ որ լեզուն գործարան է բանի , բայց բան չէ . բան ըսածս՝ խելք և գիտութիւնն է . իրաւ է որ լեզուները կ'օգնեն գիտութիւն վաստակելու , բայց իրենք գիտութիւն չեն և ոչ ալ գիտութեան պատիւ կրնան առնուլ . ինչպէս որ գաւաթը կամ պատառքաղ գործին կ'օգնեն սնունդ առնելու , բայց ոչ սնունդ կուտան ոչ սնունդեան պատիւ ունին . հոգն ալ կը բերէ զցորեանը , բայց ոչ երբէք հոգը ալիւրին պէս պատուական սեպուած է . թէ որ մէկը որչափ լեզու սովորի՝ այնչափ ալ անոնցմով նոր նոր ուսմունքներ սովորի , անանկ որ առջի գիտցած լեզուներովը չկարենար վերջի գիտութիւնները սովորիլ , այն ատեն իրաւացի է իրեն լեզուագիտութիւնը . իսկ չէ՝ թէ որ արդէն գիտցածովը կրնայ ուրիշ գիտութիւններ ալ սովորիլ , և անոնց տեղ կ'երթայ նոր նոր լեզուներ սովորելու , անօթի մարդուն առանց կերակրոյ զարգարուած սեղաններու նստիլը կը նմանի . կամ այն երկրագործին՝ որ պզտիկ արտմը բանելու համար՝ կ'երթայ տասը տեսակ գործիք կը գնէ , որուն միայն մէկ երկուքն ալ բաւական էին իր արտին , և վերջը ցանելու բան չգտնար , ինչու որ ունեցածը՝ գործիք գնելու ծախեր էր . այսինքն գիտութիւն սովորելու ժամանակը՝ լեզու սովորելու ծախեր է : Արբոր բազմալեզուին փորն անօթեանայ ու տասը լեզուով հոյ կանչէ , կարծէք որ տասը տեղէ վրան հաց պիտի իջնայ . կ'ուզէք դուք ալ փորձեցէք , հարցուցէք գիտցողներու թէ օտար լեզուներով ինչպէս կ'ըսեն հաց , և նայեցէք կը կշտանա՞ք . . . Բայց այս բանս լսելով , սիրելիք , մտքերնուդ փորը յիշեցէք , այն ալ անօթութիւն ունի . և նայեցէք որ երբ տասը լեզուով մէկ բառ մը գիտնաք՝ նոր խելք մը կը սովորիք . ամենեւին չէ . վասն զի ինչ որ հաց ըսելով կ'իմանաք՝ նոյնը կ'իմանաք թէ որ տաճկերէն ալ էմփէք ըսէք , թէ որ դաղղիարէն իէն ըսէք , անգղիարէն պրէպ , գերմաներէն պրոպ , յունարէն պրոս կամ փոփ , և այլն և այլն . անոնք

ամէնն ալ մէյմէկ ձայն են , նոր իդէա մը նոր իմաստ մը չեն տար , և Պօղոս առաքելոյն ըսածին պէս , թէ որ առանց խելք սովորելու « զլեզուս մարդկան խօսիցիմ » եղէ եւ իբրեւ զարկնձ , որ հնչէ , կամ իբրեւ զծնծղայս որ զօղանջէն : Ինծի կ'երեւնայ թէ փոխանակ այսչափ հնչմունքներու՝ աւելի լաւ է հացին հետ գիտնալը , ցորեն , ալիւր , ջուր , խմոր , փուռ , և այլն . որ նոր նոր իմաստներ կուտան մեզի , և կ'իմացնեն թէ ցորենը ալիւր կը շինուի , ալիւրը ջրով շաղուելով՝ խմոր կ'ըլլայ , որ փուռը եփելով՝ հաց կ'ըլլայ , և կարօտութեան ատեն մէկը ցորենը մանրելով այսպէս հաց կը շինէ կը կըշտանայ , իսկ այն որ տասը տեսակ ձայնով հաց կ'ըսէ՝ բերանը պարապ կը մնայ : Արեւի է մէկն ըսէ , թէ ես շատ լեզուագէտներ գիտեմ որ կուշտ կը մնան . սիրելի , ես ալ անոնցմէ շատերը գիտեմ որ զլուխնին անօթի է : Իմ խօսքս անոնց համար չէ , ինչպէս վերն ալ ըսի , որ լեզուները նոր նոր գիտութեան համար կը սովորին ( և ասանկները խիստ քիչ են ամէն տեղ , ևս առաւել մեր ազգին մէջ ) . հապա անոնց՝ որ լեզուն կը սովորին իբրեւ գիտութիւն մը , և այն պատճառաւ ստոյգ գիտութենէ զուրկ կը մնան , ինչպէս հիմայ ալ , ասկէ առաջ ալ մեր ազգին մէջ շատերը : Ի՞նչ լեզու մը գիտցող և անուխտասը ուսմունք սովորող՝ մարդկութեան մէջ 10 մղոն առաջ գնացեր է , իսկ տասը լեզու գիտցողը՝ կրնայ 10 ճամբայ գիտցողի նմանիլ՝ որ մէկ մը մէկէն կ'երթայ մղոն մը , մէկ մը մէկալէն մղոն մը , միշտ չորս դին կը դառնայ և կտրած ճամբան միշտ մէկ մղոն է մարդկութեան մէջ : Սուկրատ , Պլատոն , Արիստոտէլ , աշխարհքիս ամենէն խորունկ մտածողները , ամենէն իմաստունները և իմաստնոց ալ հայրերն եղած են , սակայն շատ հաւանական է որ յունարէնէն զատ լեզու չէին գիտեր , իսկ թէ որ հիմա կուան սկս լուսաւորեալ դարու մը մէջ՝ բոլոր ընդարձակ Արքայայն պզտի Յուսաստանին չափ իմաստուն գլուխներ



չբուսցրներ, գիտցիր որ մէկ պատճառն ալ բանասիրաց շատ լեզու սովորէին է. հինները շատ լեզու չէին գիտեր, մտքերնին ալ շատ չէր զբաղեր օտար ծայնէրու, և անպիտան զրքեր կարգալու օտար լեզուներով, ինչպէս հիմայ լեզուադիտութիւնը կը հրապուրէ շատերն. անոր հակառակ աւելի մտածող և քննող կ'ըլլային մարդիկ:

Արեմն տեսներով որ լեզուներն բոս ինքեան գիտութիւն մը չեն, տեսները թէ հապա ինչո՞ւ պէտք կը սեպուի սովորիլ. ասոր զանազան պատճառներ կան. զոր օրինակ Ա. ( ) տարազգեաց հետ խօսելու համար, և միայն խօսել կրնալու համար. ասիկայ անոնց համար է՝ որ գլուխնին թմբուկի կ'ուզէն նմանցընել որ ամէն զարնողի ձայն տան, մեր բանը ասոնց հետ չէ:

Բ. Ա՛յ աճառականութեան կամ ճամբորդութեան հարկաւոր ըլլալուն համար: Բո՞ր մէջ ալ պէտք է զանազանութիւն ընել. շատ մեծ և հարուստ վաճառականներ կան որ օտար լեզու չեն գիտեր, իրենց ընկերներովը կը վճարեն լեզուին հարկը. բայց թէ որ մէկը մեծ վաճառական չէ և անձամբ գործ կը վճարէ՝ իրաւ պէտք է որ գիտնայ ամենէն հարկաւոր լեզուն կամ լեզուները, սակայն վաճառականի չափով մը գիտնայ, հարկ չէ որ բանասիրի պէս աշխատի լեզուն կատարեալ գիտնալու. վաճառականութեան մէջ հնարագիտութիւն և հաշիւ պէտք է, գեղեցիկ շարադրութիւն և զարգաբանութիւն աւելորդ է. ասանկ ալ ճամբորդին համար՝ թէ որ քիչ տտենի համար տեղ մը պիտի երթայ ուր միայն պիտի գործածէ լեզուն՝ չափէր սովորիլ լեզու մը. իսկ թէ որ շատ տարի օտարաց մէջ պիտի կենայ կամ ընկերակցութիւն ընէ, կը վայլէ անոր ալ չափաւոր գիտնալ մը այն լեզուին:

Գ. Թարգմանութիւն ընելու համար բերնով կամ գրով: Բո՞ս պաշտօնս մեր ազգը շատ հեղ բանեցուցեր է և հիմայ ալ կը բանեցընէ և պարծանք ալ է իրեն. Թարգմանի մը կը վայլէ որ լաւ գիտնայ օտար լեզուները, ևս առաւել թէ որ

գրաւոր Թարգմանութիւն պիտի ընէ: Սակայն պէտք է գիտնալ որ Թարգմանութիւնը թէ փառաւոր սեպես թէ շահաւոր, միշտ ստորին ու ծառայական պաշտօն մըն է, և ոչ այնչափ ուրիշի ծառայելուն համար, հապա իր ազատ միտքը որ գիտութեամբ կ'ուզէ թուշտիլ՝ չոր բառերու տակ ձգելուն համար: Բայց որովհետեւ հարկաւոր է այս առուեստս ալ, և կրնայ մէկը բաւական գիտութիւն սովորէին ետեւ ալ լեզուները սովորիլ, թող ըլլան միշտ մեր ազգէն ալ քաջ Թարգմաններ. սակայն Բաբելոնյն հետ կը հարցընեմ, «Ս'ի թէ», ամենեքեան 'ի լեզուս խօսիցին, մի.», թէ ամենեքեան Թարգմանիցէն», բոլոր տղաքնիս Թարգման պիտի ընենք որ ամենուն ալ հոգով լեզուներ սովորեցընենք, և լաւ վարժեցընենք անոնց մէջ. կեցէք, ընտրութիւն մը ընենք, գիտնանք թէ ո՞վ պիտի ըլլայ Թարգման և ո՞վ չէ, որպէս զի միայն առջինը աշխատցընենք լաւ սովորելու լեզուները, և մէկալոնց վրայէն բեռին մասը վերցընենք: Եւ մը շատ նաւաստի կ'ուզէ, բայց շատ նաւաստի չուզեր. «Եթէ», ամենայն մարմին ակն էր, ուր էր ունին», կը կանչէ Բաբելալ. ես ալ կը կանչեմ, Եթէ ամենայն մարմին ազգիս լեզու է՝ ուր մնայ գլուխ:

Դ. Ամենք ալ զուարճալի զրքեր կարդալու համար լեզու կը սովորին: Բո՞նք ալ վերի թմբուկներուն քով կը թուզուք:

Ե. Երբ գիտութիւն մը կամ սովորած գիտութիւնը լաւ սովորելու համար, երբ առջի գիտցած լեզուն բաւական չըլլար: Բո՞րիկայ խելացի և իրաւացի պատճառ է, և փափագելի է որ միշտ այս պատճառաւ ըլլար լեզուադիտութիւնը. քանի որ ազգերնուս մէջ չկան օգտակար գիտութեանց լաւ դասագիրք կամ դասատուք՝ հարկ է որ օտարներէն սովորինք. սակայն մեծ փոյթ պէտք է ընել որ ազգային լեզուով Թարգմանութիւն այն զրքերը և ազգային քաջ վարպետներ ունենալ, որ թէ հարկ չըլլայ անոնց համար օտար լեզու սովորելու ատեն ան



ցընել, և թէ ազգային մտաց գաղափարները՝ օտարաց գաղափարներով խառնել, օտարացընել, չփոխել:

Զ. Սարժապետութիւն ընելու համար պէտք է լաւ և հիմանց գիտնալ լեզուն. բայց սովորաբար ազգային մարդ կը փնտռուի ամէն լեզուի համար ալ:

Է. Լեզուաց վրայ բանասիրական քննութիւն ընելու համար. կամ

Ը. Ազգային լեզուին հետ բաղդատելու և ուժը լաւ իմանալու համար: Այս բանին համար պէտք է լաւ սովորել օտար լեզուները, բայց այս մասնաւոր և քիչերու համար է, որոնց արուեստ մը պիտի դառնայ այս պարասմունքը, բաւական է թէ աւելի հարկաւոր մտմտութեամբ մը չունենան, և օգտակար ընեն աշխատանքին:

Թ. ( )տար լեզուի մը աղնուութիւնը, և անոր դպրութեան հարստութիւնը վայելու համար: Ասիկայ ալ ամենուն համար չէ. իսկ ով որ ատեն և յօժարութիւն ունի, պէտք է այս զանազանութիւնս ալ ընէ. կան լեզուներ որ բաւական հարուստ դպրութիւն և շատ գրքեր ունին կարդալու, բայց լեզունին այնչափ ազնիւ չէ. ասանկ են գաղղիարէնը և անգղիարէնը. կան ալ որ թէ դպրութիւն ունին ասոնց պէս կամ քիչ մը պակաս ալ, բայց լեզունին ազնիւ է, այսինքն ըստ ինքեան լեզուին չենքը կատարեալ, զօրաւոր, մտաց ընդարձակող կամ բարձրացրնող է, ինչպէս յունարէնը, լատինարէնը, իտալացին, գերմանացին, և այլն: Այսոր վրայօք վերջն ալ զրուցելիք ունինք: Իսկ ինչուան հիմայ զրուցածնէս կը հետեցընենք,

Ա. Ի՞նչ լեզուագիտութիւնը այնչափ մեծ բան չէ, որչափ որ ազգերնիս կը սեպէ և ետեւէ կ'իյնայ:

Բ. Քանի մը բանի համար ալ պէտք է նէ սովորիլ, պէտք չէ ամենուն ալ այն աստիճանի սովորելու աշխատիլ, ինչ որ կը վայելէ դպրութիւն սովորողներուն կամ բանասիրաց:

Գ. Ի՞նչ որ հարկ ալ ըլլայ մէկ կամ երկու լեզու սովորիլ, հարկ չէ չորս հինգ

լեզու սովորելու ատեն անցընել կամ կորսնցընել. կ'իմացուի անոնց՝ որ ոչ բանասեր պիտի ըլլան և ոչ բանավաճառ:

Արեմն հիմայ եկէք սիրելիք, ազգասէրք, ծնողք և վարժապետք, քիչ մը մտածենք այս բաներուս վրայ, և այնպէս կարգաւորենք դպրոցնիս, ուսկից ազգերնուս յոյսը և կեանքը պիտի ելլայ. նայինք թէ ինչ լեզու պէտք է սովորեցընել, որչափ պէտք է սովորեցընել. չըլլանք ասկէ վերջը այն ծնողքներէն որ իրենք օտար լեզուին այբն ալ չեն գիտեր, և անդադար կը կանչուրուտեն զաւկրնուն որ լեզու սովորին, իբրեւ թէ լեզուն է Աքիմիային ոսկեգործ քարը. «Հարք, մի՛ զայրացուցանէք», զորդիս ձեր», և մի՛ դուք ալ վարժապետք այդչափ փոյթ ունենաք չոր ու ցամաք բառերով՝ եռանդուն հասակին եռանդուն մտաց կայծերը մարելու, փոխանակ զուարճալի և օգտակար գիտութեամբք զանոնք զարգացընելու. աշխատցուցէք միտքը, բայց մի՛ տանջէք. և թէ որ անհրաժարելի պէտք է՝ օտար լեզուի մը խորթ գաւազանով տանջել այն փափուկ մտքերը, գոնէ փոխանակ մէկի երկուքի տեղ՝ չորս, հինգ, վեց խորազանով ետեւուն մի՛ ընկնաք: Ամենայն ուսմունք ծանր են տղոց սովորելու, բայց քանի կ'երթայ՝ իրենց քաղցրութիւնը կ'իմացընեն և յորդորական կ'ըլլան, լեզուները՝ ոմանք կը կարծեն թէ աւելի անուշ կուգան տղոց, այնպէս չէ. առջի բերան տղան նոր լեզու մը որ կը սկսի սովորիլ և քիչ մը կը հասկընայ, իրաւ որ անուշ կուգայ իրեն, ետեւէ կ'իյնայ, կ'ուրախանայ, իրեն մոգութեան պէս բան մը կ'երեւնայ օտար նշաններէ իրեն ազգային գրերուն ձայները հանել, օտար բառերէ իրեն բնական գիտցած բառերը իմանալ, և նոր նոր բաներ հասկընալ. բայց երբոր կարգը երկրորդ, երրորդ լեզուներուն կուգայ, բանը կը փոխուի, զարմանքը կ'երթայ, ձանձրութիւնը կուգայ, առջինէն աւելի բան մը չսովորի, հասկա հազածին վրայ մէկ մ'ալ հազնելու պէս բան մը կ'երեւնայ, որ քիչ մը նե-



ղացուցիչ բան ալ է : Արեւիկ է ոմանց փառաւոր կամ հարկաւոր բան մ'ալ երեւնայ՝ որ մեր տղաքը գիտնային ազգային լեզուէն զատ՝ տաճիկերէն, գաղղիարէն, յունարէն, անգղիարէն, իտալերէն, ( ոմանք ասոնցմէ ետեւ կը շարեն բանի մը ուրիշ երէն երէն ալ ) . ինչ ազգէկ բան . և ասոնք ամէնն ալ գիտնային հասկընալ, ուղղագրել, շարագրել և խօսիլ . — աւելի փառաւոր . անանկ որ ուր ալ պէտքը ըլլար՝ մէկէն ըլլային թարգման, զրագիր, հեղինակ ( կարելի է նաեւ փաստաբան և բանաստեղծ ալ ) . շատ ազնիւ : Մենք ալ ասոնց ամենուն կը հաւանինք . բայց այս է տաբակումնիս՝ թէ ( եթէ տղոց ձանձրալի ալ չըլլար ) երբ պիտի սովորին այս երէնեւորան շարքը . տղան հազիւ վեց կամ եօթն տարի կը թուլթեան կը կենայ՝ միտքը ուսմունքի բացուելէն ետեւ . այս կարճ տարիներուս մէջ ուսմունք սովորի, մարդկութիւն սովորի թէ լեզուները . թէ որ լեզու սովորիլը խիստ դժուրին բան մը ըլլար արեւելոց լոր բռնելուն պէս, ես ալ կ'ըսէի որ վեցին տեղ առաքելոց թուով լեզու սովորին . բայց քանի որ այս դժուրութեան ճամբան բացուած չէ, քանի որ սակաւագիւտ են հրէշաւոր մտքերը որ ամուս մէջ տարւոյ ընթացք կ'ընեն, ես դարձեալ Պօղոս առաքելոյն ըսածը կ'ընտրեմ, և բաւական կը սեպեմ հասարակաց համար մէկ լեզու մը, կամ թէ երկուք . « Այլ եթէ », ևս աւելի՛ երեք . » . և խրատ կուտամ որ այն կը թուլթեան անգին, պատուական, բոլոր կեանք մը արժող կարճ տարիները՝ պարապ ձայներով տղոց գլուխը թնդացընելու տեղ՝ ջանք դնէ ազգերնիս օգտակար գիտութիւններ սովորցընելու, մանաւանդ բարոյականներն, և մէկ աւելի լեզուի մը տեղ՝ քիչ մ'ալ աւելի լաւ և հիմնովին սովորեցընէ գիտութիւնները : Արբոր դաստիարակութեան ատենը լիննայ, և պատանին յօժարութիւն ունենայ նոր լեզուներ սովորելու՝ վերոյիշեալ իրաւացի պատճառներուն մէկուն համար, այն ատեն թող սովորի որչափ կ'ուզէ, վասն զի ստոյգ է

որ բանի մ'ալ կը բերէ սովորածը, թէպէտ և շատ օգտակար ալ չըլլայ . իսկ զարատան մէջ սովորողներէն շատը՝ ելլելէն ետեւ հաւանական է որ՝ լեզուներուն մէկ երկուքը բոլորովին ձեռքէ թողուն, ինչու որ լաւ ալ չէին սովորած, և անոնց համար անցուցած ատեննուն վրայ ցաւին : Այիստ քիչ մարդ եղած է որ իրաւամբ կրցած ըլլայ պարծելու սովորած լեզուացը վրայ, բայց խիստ շատերն կ'ուրախանան սովորած գիտութեանցը վրայ . վասն զի գիտութիւններն կրնան ամէնքը մէկէն ալ մարդուն մտքին օգնել, իսկ լեզուներն միշտ մէկիկ մէկիկ կը ծառայեն : Այիստ քիչ մարդ եղած է որ իրեք չորս լեզու կատարեալ գիտցած ըլլայ . մանաւանդ թէ խիստ քիչ կան որ իրենց բնիկ լեզուին քերականութեան կանոնները կատարեալ գիտնան և անսխալ գրեն, ուր միայն օտարի լեզուները :

Արեմն թէ որ զարմանալի ալ երեւան տասը կամ տասնհինգ լեզու գիտցողները, գոնէ ասկէ վերջը նախանձելի չըլլան, վասն զի լեզուագէտներ շատ գտնուել են, բայց գիտցածնին բանի բերող՝ խիստ քիչ . և սովորաբար նմանած են այն ազահներուն որ ստակը միայն դիզելու և հողու տակ ծածկելու համար կը ժողվեն, առանց վայելու . կարելի է բաղդը մէկուն գտնել տոյ թաղուած ոսկին, բայց լեզուները օդին հետ ցնդած կը կորսուին . ասոր համար ատանկներուն շափն շարժողը չէ ուսումնասիրութիւն՝ հապա մէկ կիրք մը՝ որուն իրաւամբ կրնանք ըսել լեզուամուլութիւն, ինչպէս որ ալ գրեթէ ամէն մարդ մնութիւն մը ունի՝ ոմանցը փառաւոր ոմանցը անփնաս սեպուած, միայն թէ լեզուամուլութիւնը քիչ մը շատ տարածուած է իմաստակաց մէջ : Ոմանք ալ բնական յարմարութիւն մը ունին լեզու սովորելու՝ անոր համար կը սովորին, ասոնց ըրածն ալ բարոյական ջրգողութեան պէս բան մ'է : Աւելի ցաւալի են անոնք որ պարծենալի բան կը սեպեն լեզուներ գիտնալը, և կը կարծեն թէ 10 կամ 20 լեզու գիտնալով՝ աշ-



խարհքիս ամէն ձայնը պիտի հասկընան, և չեն յիշեր որ անդին դեռ 2000 լեզու ալ կայ, որ ոչ ոք պիտի կարենայ բովանդակել գլխուն մէջ, թէպէտ և լըտիլթսին գորտին պէս ալ ջանայ: Թէ որ մարդու մը 20 լեզու գիտնալը մեծ պարծանք մըն է, աւելի պարծելի կը սեպեմ իմ տղայու թեանս զբօսանք Վերիկացի վանդակաբնակ հիւր մը, ձեռքի չափ թռչուն մը, որ անկէ աւելի թուով թռչնոց լեզուներ կը խօսէր, ճիշդ նմանցընելով ձայներնին և լսողները խաբելով:

Խրկորդ յօգուածով մը կը խօսինք թէ որ լեզուն հարկաւոր է սովորի, և թէ ինչ կարժեն այն լեզուները որոնց որ հիմայ ազգերնիս ետեւէ ընկեր է, և թէ որ լեզուաց վայելուչ է հետեւիլը, և առաւել ազգային լեզուին:

Հ. Ղ. Մ

#### ՀԱՆՈՍՈՒԹԻՒՆ

Կախաղանաւոր բարաստանք:

Հին պատմութեանց մէջ անմահ յիշատակաց արժանի, և ամէն ատեն զարմանալի սեպուած Շամիրամ Մորեստանայց թագուհին իր ուրիշ մեծագործութիւններէն զատ՝ որոնցմով թագաւորանիստ Քաբէլոն քաղաքը զարդարեց, այլ և այլ պարտէզներ ալ շինել տուած էր որ խիստ անուանի էին հնոց մէջ. որով ինչուան աշխարհիս եօթը հրաշալեաց կարգը անցան:

Ի՞նչ պարտէզները, որ Յունաց պատմիչները մեծ զարմանքով կը յիշեն, Կախաղանաւոր բարաստանք կամ Կախաղանաւոր բարաստանք կ'ըսուէին. ձեւերնին բառակուսի էր, և ամէն մէկ կողմին երկայնութիւնը չորս հարիւր ոտք: Կախաղանաւոր ըսուելուն պատճառը ան է որ աս պարտէզները դար դար հետ ճեմէ իրարմէ բարձր շինուած էին, և յատկան շիտակ հող էր: Իմենէն

վերի պարտէզին բարձրութիւնը՝ քաղքին պարիսպներուն բարձրութեանը կը հասնէր: Ինչի պարտիդէն մէկալը անցնելու համար՝ տասը ոտնաչափ լայնութեամբ սանդուխ մը կար: Ինչ ահագին ծանրութիւն ունեցող պարտէզները կամարներու վրայ կեցուցած էին, և ամէն մէկ կամարին վրայ ինը տասը ոտնաչափ լայնքով տափակ քարեր դրած էին, ան քարերուն վրայ կարգ մը եղէգ կպրածիւթով աղէկ մը ծեփած, ետքն ալ երկու կարգ աղիւս՝ շաղախով կպցուցած. ասոնց վրայ ալ կապարի թերթերով ծածկած: Կապարէն ետեւ կուգար հողը, որ այնպիսի թանձրութեամբ դիզուած էր որ մէջը մեծամեծ ծառեր կրնային արմատ ձգել ու մեծնալ: Կանաւոր արուեստով շինած ջրհան մըն ալ կար գետին հետ հաղորդուած՝ այն օդակառոյց բուրաստանները ոռոգելու համար: Ինչ պարտէզներուն մէկ գեղեցկութեան ու հիանալու բանն ալ մէջտեղը ձեւացուցած սքանչելի դրախտն էր: Շամիրամ աս բաներս շինելու համար անբաւ ծախք ըրաւ, և տարիներով ժողովրդեան մեծ մասը աշխատցուց աս բանիս վրայ:

Իսկ Ռեոսոս հնախօս վիպագիրը կ'ըսէ թէ՝ Կաբուգոդոնոսոր շինած է այս կախաղանաւոր բուրաստանները՝ իր Վիդաս տիկնոջը համար որ Վիդահայ Սարաց թագաւորին աղջիկն էր, որպէս զի իր հայրենի երկրին լեռնոտ ու զուարճալի դրեցը կարօտը՝ կերպով մը կարենայ Քաբէլոնի մէջ ալ առնուլ:

Սերջի ատեններս ալ՝ այլ և այլ տեղեր կախաղանաւոր բուրաստաններ շինեցին, որոնց մէջ ամենէն անուանին Խուլանտա Իմերիք քաղաքին մէջինն է: Ինչոր մեծագործութեանը առջև Շամիրամինները բան չեն. և ասով ալ աւելի գերազանց է որ շատ ջերմանոցներ կան մէջը՝ Միայի և Վերիկայի ծաղկըներով ու պտուղներով: Միկայ իրեք պարտէզ է իրարու վրայ շինած. ամենէն վրայինին չորս դին փառաւոր ապակափեղկերով պատած է, վրան ալ